# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ
ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016/242
*20 օգոստոս 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 92-Ա որոշումը:

Առդիր 1 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 92-Ա

## 06-023-0004-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ս. Ծատուրյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991թ. թիվ 2 որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը գրանցամատյան թիվ 810 24.05.2018թ. Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված 2-րդ կետի 4-րդ հոդվածով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-023-0004-0004 ծածկագրի տակ գտնվող 0,33142հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1981-1985թթ կառուցված 112,55քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Սաթենիկ Ժորայի Ծատուրյանի /ծնված 1979թ/, Քնարիկ Ռոբերտի Մխիթարյանի /ծնված 1958թ/, Տաթևիկ Ժորայի Ծատուրյանի /ծնված 1980թ/ և Նաիրա Ժորայի Ծատուրյանի /ծնված 1987թ/ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0,22հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,11142հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Սաթենիկ Ժորայի Ծատուրյանի, Քնարիկ Ռոբերտի Մխիթարյանի, Տաթևիկ Ժորայի Ծատուրյանի և Նաիրա Ժորայի Ծատուրյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Հողամասում առկա են ինքնակամ կառուցված 94,99քմ մակերեսով բնակելի տան մաս և 36,84քմ մակերեսով անասնաշենք:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 2 փողոց թիվ 53:
7. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ